

## ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1992 - 2007 ԹԹ.

### ՆՈՒԲԱՐ ՉԱԼՍՅԱՆ

Երբ 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը հռչակվեց անկախ պետություն, Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի ինքնիշխանությունն ու անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նրա հետ: Դա նպաստեց երկու երկրների միջև ուղղակի կապերի և միջպետական հարաբերությունների հաստատման, հայ և չին ժողովուրդների ավանդական, դարավոր բարեկամության վերածննդի ու նոր հուն մտնելու գործընթացին: Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի և Չինաստանի միջև քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային փոխհարաբերությունների լուսաբանմանը երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվելուց հետո<sup>1</sup>:

1992 թ. ապրիլի 6-ը նշանակալից է Հայաստանի և Չինաստանի համար: Այդ օրը ստորագրվեց համատեղ հայտարարություն երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին: Այդ փաստաթղթում ամրագրված է. «ՀՀ և ՉԺՀ կառավարությունները համաձայնեցին զարգացնել բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը երկու երկրների միջև ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, փոխադարձ հարգանքի ու չհարձակման, միմյանց ներքին գործերին չմիջամտելու, իրավահավասարության, փոխշահավետության, ինչպես նաև խաղաղ գոյակցության սկզբունքների հիման վրա»<sup>1</sup>: Փաստաթղթում նշված է նաև, որ Հայաստանի և Չինաստանի կառավարությունները որոշեցին հաստատել դիվանագիտական հարաբերություններ երկու պետությունների միջև դեսպանների մակարդակով և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ 1992 թ. ապրիլի 6-ից:

Այս փաստաթղթի ընդունումից երեք ամիս անց՝ հուլիսի 23-ին, Երևանում սկսեց գործել ՉԺՀ-ի դեսպանությունը գործերի ժամանակավոր հավատարմատար Չժան Յանյանի գլխավորությամբ: Դա, փաստորեն, Չինաստանի առաջին պաշտոնական առաքելությունն էր: Ինչ վերաբերում է Չինաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ստեղծմանը, ապա այն տեղի ունեցավ ավելի ուշ՝ 1996 թ. օգոստոսի 10-ին, երբ Պեկինում բացվեց ՀՀ դեսպանությունը և գործերի ժամանակավոր հավատարմատար նշանակվեց Ազատ Մարտիրոսյանը, որը ՉԺՀ-ում արտակարգ և լիազոր դեսպան նշանակվեց 1997 թ. հոկտեմբերի 17-ին:

<sup>1</sup> Հոդվածագիրը 1992-2009 թթ. պաշտոնավարել է ՀՀ-ում ՉԺՀ դեսպանությունում՝ ականատեսը և առանձին դեպքերում մասնակիցը լինելով երկու երկրների փոխհարաբերությունների զարգացման գործընթացին: Հեղինակը հոդվածում օգտագործել է նաև անձնական արխիվային նյութերը:

<sup>1</sup> «ՉԺՀ և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 10-րդ տարեդարձը (1992-2002 թթ.)» (չինարեն և ռուսերեն), փաստաթղթերի ժողովածու, Պեկին, 1992, էջ 3:

1992 թ. հուլիսի 2-ին ՉԺՀ պետական խորհրդի նախագահ վարչապետ Լի Պենի հրավերով պաշտոնական այցով Չինաստան մեկնեց ՀՀ կառավարության պատվիրակությունը ՀՀ փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանի գլխավորությամբ: Սա, փաստորեն, ՀՀ առաջին պաշտոնական այցն էր Չինաստան: Այցի շրջանակներում տեղի ունեցան մի շարք բանակցություններ վարչապետ Գ. Հարությունյանի և ՉԺՀ վարչապետ Լի Պենի, ինչպես նաև ժողովրդական ներկայացուցիչների համաչինական մշտական կոմիտեի նախագահ Վան Լիի միջև: Պետք է նկատել, որ բանակցությունների ժամանակ կողմերը բարեկամական, անկեղծ ու գործնական մթնոլորտում մտքեր փոխանակեցին չին-հայկական հարաբերությունների և փոխադարձ հետաքրքրություններ կայացնող հարցերի վերաբերյալ: Երկկողմ բանակցությունների արդյունքում ստորագրվեց համատեղ հայտարարություն, ինչպես նաև մի շարք համաձայնագրեր, որոնց կանդիդատներն էին ստորև:

Հայտարարության մեջ նշվում էր, որ կողմերը բարձր են գնահատում պաշտոնական առաջին հանդիպումը, և որ այն «կնպաստի փոխշահավետ համագործակցության զարգացմանը, կհամապատասխանի երկու երկրների ժողովուրդների շահերին ու սպասումներին և կաջակցի խաղաղության ու կայունության պահպանմանը Ասիայում և ողջ աշխարհում»<sup>2</sup>:

Փաստաթղթում ամրագրվեցին նաև Չինաստանի և Հայաստանի արտաքին քաղաքական դիրքորոշումները: Այնտեղ ընդգծվում է, որ «Հայաստանի կառավարությունը ճանաչում է, որ ՉԺՀ կառավարությունը Չինաստանի միակ օրինական կառավարությունն է, որ թայվանը հանդիսանում է Չինաստանի տարածքի անբաժանելի մասը և հաստատում է, որ Հայաստանի կառավարությունը չի հաստատի թայվանի հետ պաշտոնական հարաբերություններ»<sup>3</sup>:

Իսկ ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցում չինական կողմի դիրքորոշմանը, ապա համատեղ հայտարարության մեջ ուղղակի արձանագրված էր հետևյալը. «ՉԺՀ կառավարությունը հանդես է գալիս միջազգային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու օգտին: Չինական կառավարությունը աջակցում է միջազգային հանրության, այդ թվում ՄԱԿ-ի ջանքերին՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը»<sup>4</sup>:

1993-1995 թթ. հայ-չինական պետական շփումներում նկատվում էր որոշակի պասիվություն, որը պետք է բացատրել հարավկովկասյան տարածաշրջանում տիրող քաղաքական բարդ իրավիճակով: Սակայն 1996 թվականից երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններում ակնհայտ աշխուժացում նկատվեց: Նույն թվականի ապրիլի 16-ին Հայաստան ժամանեց ՉԺՀ Պետական խորհրդի նախագահի տեղակալ, արտաքին գործերի նախարար Ցյան Ցիչենի գլխավորած պատվիրակությունը: ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ՉԺՀ արտգործնախարարին ներկայացրեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները՝ վստահություն հայտնելով, որ տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացի և Հայաստանի հաղորդակցության ուղիների բացման հետ հայ-չինական առևտրատնտեսական հարաբերությունները կաշխուժանան: ՉԺՀ արտգործնախարար Ցյան Ցիչենը իր հերթին հավաստիացրեց,

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 12 :

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 15:

որ Չինաստանը պատրաստվում է զարգացնել Հայաստանի հետ բարեկամական հարաբերությունները: Այս այցի ընթացքում քննարկվեցին նաև ՀՀ նախագահի՝ Չինաստան կատարելիք այցին վերաբերող հարցերը: Հայաստանում գտնվելու օրերին ՉԺՀ պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Բ. Արարքցյանի և ՀՀ արտգործնախարար Վ. Փափազյանի հետ: Հանդիպումների ժամանակ կարևորվեց հայ-չինական միջխորհրդարանական համագործակցության զարգացման, պատգամավորական խմբերի փոխայցերի կազմակերպման, խորհրդատվությունների անցկացման անհրաժեշտությունը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց միմյանց աջակցել միջազգային կազմակերպություններում: Հետագա տարիները փաստեցին այդ բնագավառում երկուստեք արդյունավետ համագործակցության մասին:

Չինաստանի պատվիրակության ՀՀ կատարած այցի ընթացքում կողմերի միջև որևէ փաստաթուղթ չստորագրվեց, քանի որ առջևում Հայաստանի նախագահի պաշտոնական այցն էր Չինաստան: Այն կայացավ 1996 թ. մայիսի 3-6-ը Չինաստանի նախագահ Ցզյան Ցզենի հրավերով: Այս այցը, փաստորեն, նոր որակ հաղորդեց հայ-չինական հարաբերություններին: ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը բարձր ընդունելության արժանացավ չին ղեկավարության կողմից: Տեղի ունեցած բանակցությունների և հանդիպումների արդյունքում մայիսի 5-ին Պեկինում ստորագրվեց համատեղ հայտարարություն ՉԺՀ և ՀՀ միջև բարեկամական հարաբերությունների սկզբունքների մասին: Համաձայն այդ փաստաթղթի՝ «ՉԺՀ-ն և ՀՀ-ն, հանդիսանալով իրավահավասար և բարեկամ երկրներ, պատրաստ են զարգացնելու բարեկամական, ապագային ուղղված հարաբերություններ երկու երկրների և նրանց ժողովուրդների միջև խաղաղ գոյակցության հինգ սկզբունքների՝ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության փոխադարձ հարգման, փոխադարձ չհարձակման, միմյանց ներքին գործերին չմիջամտելու, հավասարության և փոխշահավետության, խաղաղ գոյակցության, ինչպես նաև միջազգային հարաբերությունների այլ համընդհանուր ճանաչում գտած նորմերի հիման վրա»<sup>5</sup>: Կողմերը կարևորեցին ՉԺՀ ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի և ՀՀ Ազգային ժողովի միջև շարունակական համագործակցության անհրաժեշտությունը, պատրաստակամություն հայտնեցին աջակցելու օրենսդրական ակտերի մշակման և իրագործման բնագավառում փորձի փոխանակմանը, սատարելու երկու երկրների օրենսդիր և գործադիր մարմինների միջև կապերի հաստատմանը:

1997 թ. գարնանը տեղի ունեցավ Չինաստանի ժողովրդական ներկայացուցիչների Համաչինական ժողովի մշտական կոմիտեի փոխնախագահ Վան Բինցիանի այցը Հայաստան, որի ընթացքում չինական կողմը կարևորեց համաշխարհային բազմաբևեռ քաղաքական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Հայկական կողմն ընդգծեց այս գործընթացում Չինաստանի դերը, կարևորվեց երկու երկրների միջև խորհրդարանական համագործակցության զարգացումը՝ պայմանավորվելով մասնավորապես ՀՀ Ազգային ժողովում ստեղծել հայ-չինական պատգամավորական բարեկամական խումբ: Այս առնչությամբ Հայաստանում ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպան Չժու Չժաոչունը (1998-2002 թթ.) նշել է, որ այն «նոր դրական քայլ է չին-հայկական հարաբերությունների ճանապարհին: Երկու երկրների օրենս-

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 22:

դիր մարմինների միջև բարեկամական համագործակցությունը բացառիկ դեր է խաղում պետական հարաբերություններում»<sup>6</sup>:

Հայ-չինական հարաբերությունների զարգացման ու խորացման գործում կարևոր դեր խաղաց ՉԺՀ Պետական խորհրդի նախագահ Չժու Յունցզիի հրավերով ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի 2000 թ. դեկտեմբերի 3-8-ը տեղի ունեցած աշխատանքային այցը Չինաստան: Այս այցի կարևորությունն այն էր, որ երկու երկրների գործադիր մարմինների ղեկավարները բանակցեցին ինչպես երկկողմ հարաբերությունների ամրապնդման, այնպես էլ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանային ու միջազգային հարցերի շուրջ: Կողմերը ստորագրեցին ՀՀ և ՉԺՀ կրթության նախարարությունների միջև համագործակցության համաձայնագիր, իսկ դեկտեմբերի 5-ին Պեկինում ստորագրվեց ՉԺՀ կառավարության և ՀՀ կառավարության միջև համատեղ հայտարարություն, որի 9-րդ կետում ասված է, որ «Չինաստանը աջակցում է Հայաստանի ազգային անկախության ամրապնդման և տնտեսական զարգացման ուղղությամբ ձեռնարկված ջանքերին և հույս ունի Հայաստանում տեսնել քաղաքական կայունություն և տնտեսական զարգացում: Չինական կողմը ողջունում է Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև ընթացող անմիջական հանդիպումները և միջազգային հանրության ներկա ջանքերը՝ հիմնահարցի խաղաղ կարգավորման ուղղությամբ և հույս հայտնում, որ առկա բանակցային գործընթացի շրջանակներում որքան հնարավոր է շուտ գտնվի նշված հակամարտության արդար և ռացիոնալ լուծում՝ միջազգային ասպարեզում համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին և նորմերին համաձայն»<sup>7</sup>:

Նրանում կողմերը նաև մեծ կարևորություն տվեցին գիտության, առևտրի ու տնտեսության, մշակույթի, կրթության, առողջապահության, տեղեկատվության, սպորտի և այլ ոլորտներում համագործակցության ամրապնդման անհրաժեշտությանը:

Հայ-չինական հարաբերությունների խորացմանը նպաստեց նաև 2002 թ. հունիսի 10-ին ՉԺՀ Ժողովրդական ներկայացուցիչների Համաչինական Ժողովի մշտական կոմիտեի նախագահի տեղակալ Թ. Դավամաթի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան, որը համընկավ հայ-չինական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 10-րդ տարեդարձին: Չին բարձրաստիճան պաշտոնյայի հանդիպումները ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի, Ազգային Ժողովի նախագահ Ա. Խաչատրյանի և վարչապետ Ա. Մարգարյանի հետ նոր լիցք հաղորդեցին հայ-չինական հարաբերությունների հետագա զարգացմանը և ամրապնդմանը: Հայկական կողմը շեշտեց իր շահագրգռվածությունը Չինաստանի հետ երկկողմ և բազմակողմ հարաբերությունների զարգացման հարցում՝ նկատի առնելով Չինաստանի աճող դերը միջազգային հարաբերություններում և համաշխարհային տնտեսության մեջ: Կողմերը մեկ անգամ ևս ընդգծեցին միջազգային ասպարեզում արդյունավետ գործակցության, հեռավորարևելյան տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ կողմերի ունեցած համաման դիրքորոշման, պաշտպանական գերատեսչությունների միջև համագործակցության հաստատման անհրաժեշտության մասին: ՀՀ ղեկավարության հետ հանդիպում-

<sup>6</sup> "Республика Армения", 18. 12. 1998.

<sup>7</sup> «ՉԺՀ և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 10-րդ տարեդարձը (1992-2002 թթ.)», էջ 32:

ների ժամանակ կարևորվեց նաև քաղաքական երկխոսությունների միջոցով երկու երկրների միջև համագործակցության զարգացման առաջնահերթությունների վերաբերյալ իրենց մոտեցումները համաձայնեցնելը:

2004 թ. սեպտեմբերի 26-30-ը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը ՉԺՀ նոր խթան հանդիսացավ Հայաստանի և Չինաստանի միջև հարաբերությունների զարգացման համար: Այն կարևորագույն քայլ էր քաղաքական երկխոսության և վստահության որակական ամրապնդման ուղղությամբ: Այցի ընթացքում ՀՀ նախագահը հանդիպումներ ունեցավ ՉԺՀ նախագահ Յու Ցզինթաոյի, վարչապետ Վեն Չիաբաոյի և ՉԺՀ նշտական կոմիտեի նախագահ Ու Բանգոյի հետ: Ստորագրված փաստաթղթերի շարքում առաջնահերթ նշանակություն ունեցավ Համատեղ հռչակագիրը, որով ամփոփվեցին երկկողմ համաձայնությունների ձեռքբերումները, ինչպես նաև ապագա համագործակցության մոտեցումները:

Գնահատելով ստորագրված փաստաթղթերի կարևորությունը՝ ՀՀ նախագահը նշեց. «Սենք անկեղծորեն շահագրգռված ենք Չինաստանի տնտեսական ներկայությամբ մեր տարածաշրջանում և մասնավորապես Հայաստանում: Հայաստանը և Չինաստանը ունեն համագործակցության լայն սպեկտր՝ նկատի առնելով նաև այն, որ երկու երկրները չունեն քաղաքական խնդիրներ, իսկ միջազգային շատ հրատապ խնդիրների վերաբերյալ ունեն նմանատիպ մոտեցումներ: Կարևոր է այն հանգամանքը, որ ՀՀ և ՉԺՀ առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ են և ունեն միանման առևտրային ռեժիմ ու գործակցության ներուժ»<sup>8</sup>:

ՉԺՀ նախագահ Յու Ցզինթաոն ՀՀ նախագահի հետ հանդիպման ժամանակ տեղեկացրեց, որ ի նշան բարեկամության՝ Չինաստանի կառավարությունը որոշել է Հայաստանին անհատույց հատկացնել 10 մլն յուանի տեխնիկական ու տնտեսական օգնություն:

Կարևորելով ստորագրված Համատեղ հռչակագիրը՝ պետք է նշել, որ նրանում որոշակիացվեցին փոխադարձ մոտեցումները կողմերի համար կենսական հետաքրքրություն ներկայացնող և միջազգային հնչեղություն ունեցող հիմնախնդիրների, մասնավորապես Թայվանի և Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ: Վերահաստատվեց Չինաստանի դիրքորոշումը ԼՂ-ի հարցի «արդարացի և ռացիոնալ» կարգավորման ուղղությամբ՝ հիմնված միջազգային իրավունքի նորմերի վրա: Իր հերթին հայկական կողմը վերահաստատեց «մեկ Չինաստան» քաղաքականության իր ամփոփոխ դիրքորոշումը՝ ՉԺՀ կառավարությունը ճանաչելով որպես ողջ Չինաստանը ներկայացնող միակ օրինական կառավարություն: Փաստաթղթում ընդգծվում էր նաև որ «Թայվանը հանդիսանում է Չինաստանի տարածքի անբաժանելի մասը և, որ հայկական կողմը հաստատում է Թայվանի հետ որևէ ձևով պաշտոնական հարաբերություններ չհաստատելու և որևէ պաշտոնական բնույթի շփումներ չիրականացնելու իր նվիրվածությունը՝ հանդես գալով «երկու Չինաստան» կամ «մեկ Չինաստան, մեկ Թայվան», «Թայվանի անկախություն» ստեղծելու փորձերի դեմ»<sup>9</sup>: Համատեղ հռչակագրում մեծ կարևորություն տրվեց նաև երկու երկրների միջխորհրդարանական բարեկամական կապերի

<sup>8</sup> «Հայաստանի Հանրապետություն», 28.09.2004 թ.:

<sup>9</sup> ՉԺՀ-ի ԱԳՆ տեղեկագիրք (չինարեն), «Չինաստանի ժողովրդական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև Համատեղ հռչակագիր» (2002-2006 թթ.), Պեկին, 2006, էջ 19:

զարգացմանը՝ անհրաժեշտ համարելով օրենսդիր մարմինների միջև փորձի փոխանակումը և խորհրդարանական բարեկամական խմբերի փոխայցելությունները: Նրանում նշանակություն էր տրվում միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում, այդ թվում նաև ՄԱԿ-ում Հայաստանի և Չինաստանի համագործակցության ու համատեղ ջանքերի համակարգված իրականացմանը: Այդ մասին հռչակագրում ուղղակի ասվում է, որ կողմերը «պատրաստակամություն են հայտնում հետագայում շփումներ հաստատել և ամրապնդել համագործակցությունը միջազգային կարևոր խնդիրներում, որպեսզի պաշտպանեն զարգացող երկրների ընդհանուր շահերը»<sup>10</sup>: Խոսելով երկկողմ հարաբերությունների զարգացման վերաբերյալ չինական կողմի մոտեցումների մասին՝ Չինաստանի նախագահ Յու Ցզինթաոն դրանք ամփոփեց երեք կետով, որոնցից առաջինը հանգում էր երկու երկրների ղեկավարությունների միջև քաղաքական վստահության ամրապնդմանը, բարձր մակարդակի բազմակողմ շփումների ակտիվացմանը, հատկապես քաղաքական և արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև, ինչպես նաև ՄԱԿ-ում համագործակցության սերտացման անհրաժեշտությամբ:

2004 թ. երկկողմ հարաբերությունների ծավալումն ընթացավ արտաքին գործերի գերատեսչությունների ակտիվ շփումների պայմաններում: Այսպես՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր առաջին անգամ երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների ղեկավարների հանդիպումներն անցան երեք փուլով՝ նույն տարվա ապրիլին ՉժՅ փոխարտգործնախարար, ՉժՅ կառավարության հատուկ հանձնակատար Լի Յույի ՅՅ կատարած այցի, սեպտեմբերին ՅՅ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանի և ՉժՅ արտգործնախարար Լի Ջաոսիի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 59-րդ նստաշրջանի շրջանակներում կայացած հանդիպումը Նյու Յորքում և հոկտեմբերին Լի Ջաոսիի այցը Հայաստան, որի ժամանակ տեղի ունեցան կարևոր հանդիպումներ ՅՅ նախագահ Ռ. Քոչարյանի, վարչապետ Ա. Մարգարյանի և արտգործնախարար Վ. Օսկանյանի հետ: Այս հանդիպումների ժամանակ աշխույժ քննարկումների արդյունքում ձևավորվեց քաղաքական երկխոսության օրակարգը, ամրագրվեցին ՅՅ նախագահի Չինաստան կատարած այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման աշխատանքները:

2005-2007 թթ. ամրապնդվեցին հայ-չինական հարաբերությունները բոլոր բնագավառներում, դրանք դարձան էլ ավելի դինամիկ ու համակարգված: Այդ մասին են վկայում Հայաստանի և Չինաստանի նախագահներ Ռ. Քոչարյանի և Յու Ցզինթաոյի շնորհավորական նամակները երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 15-րդ տարեդարձի առթիվ, ինչպես նաև երկու երկրների արտաքին գործերի նախարարների ու բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելությունները:

Հայ-չինական բարեկամական ջերմ հարաբերությունների առկայության մասին է վկայում 2008 թ. օգոստոսի 7-ին Չինաստանում կայացած աշխարհի 29-րդ օլիմպիական խաղերի պաշտոնական բացման արարողությանը ՅՅ նախագահ Ա. Սարգսյանի մասնակցելու փաստը, ինչպես նաև նույն տարվա դեկտեմբերին ՅՅ Ազգային ժողովի նախագահ Յ. Աբրահամյանի՝ Չինաստան կատարած պաշտոնական այցը, որի ժամանակ

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 20:

կողմերը ստորագրեցին «ԶԺՀ համաչինական ժողովրդական ժողովի և ՀՀ Ազգային ժողովի միջև փոխըմբռնման մասին Հուշագիր»:

Հայաստանի և Չինաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվելուց հետո երկու երկրների միջև սկսեցին զարգանալ նաև առևտրատնտեսական կապերը:

1992 թ. հունվարի 9-ին Երևանում ստորագրվեց առևտրատնտեսական համագործակցության մասին հայ-չինական համաձայնագիրը, որը սկիզբ դրեց երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացմանը: Հարկ է նշել, որ Հայաստանի և Չինաստանի միջև տնտեսական կապերի զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1993 թ. Հայաստանում ԶԺՀ դեսպանությանը կից առևտրատնտեսական հարցերով գրասենյակի ստեղծումը, որը կոչված էր համակարգելու երկու երկրների տնտեսության և առևտրի զարգացման շահագրգիռ նախարարությունների գործունեությունը, ձեռնարկելու գործնական քայլեր և խթանելու Հայաստանի ու Չինաստանի միջև առևտրատնտեսական կապերի զարգացումը:

Հայաստանի և Չինաստանի միջև տնտեսական համագործակցության և փոխադարձ առևտրի զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1992 թ. հուլիսին ԶԺՀ Պետական խորհրդի նախագահ Լի Պենի հրավերով Հայաստանի Հանրապետության փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանի զլխավորած կառավարական պատվիրակության այցը Չինաստան, որի ընթացքում ստորագրվեցին տնտեսական ոլորտին վերաբերող հետևյալ փաստաթղթերը՝

- Համաձայնագիր գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ,
- Համաձայնագիր կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության վերաբերյալ,
- Համաձայնագիր ԶԺՀ-ի կողմից Հայաստանին վարկ տրամադրելու վերաբերյալ:

Հայաստանը և Չինաստանը համաձայնության եկան զարգացնելու համագործակցությունը, գիտատեխնիկական, տեղեկատվության փոխանակման, գյուղատնտեսության, առևտրի, տրանսպորտի, կապի, միջբանկային համագործակցության, կրկնակի հարկի բացառման և այլ բնագավառներում:

Երկու երկրների տնտեսական զարգացման և ընդլայնման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1999 թ. ստեղծված հայ-չինական առևտրատնտեսական միջկառավարական հանձնաժողովը, որի առաջին նիստը տեղի ունեցավ նույն թվականի օգոստոսի սկզբին Երևանում: Երկու կողմ քննարկումների արդյունքում առաջ քաշվեցին տնտեսական համագործակցության բազմաբնույթ առաջարկներ, և ձեռք բերվեցին կոնկրետ պայմանավորվածություններ տարբեր նախագծերի, հատկապես քիմիական արդյունաբերության զարգացման բնագավառում: Երկու երկրները համաձայնության եկան «Նաիրիտ» ընկերության տեխնոլոգիաներով Չինաստանում հայ-չինական համատեղ ձեռնարկություն ստեղծելու և հետագայում չինական համապատասխան գերատեսչությունների կողմից նրա գործունեությունը արտոնագրելու և հաստատելու ուղղությամբ: Հարկ է նշել, որ քիմիական արդյունաբերության այդ բնագավառում համատեղ կապը ունեցել է հիսնամյա պատմություն, և Չինաստանում փաստորեն կաուչուկի առաջին գործարանը ստեղծվել է հայկական ձեռնար-

կությունների փորձի հիման վրա: 1960-ական թթ. «Նաիրիտի» տեխնիկական աջակցությամբ Չինաստանի Շանսի նահանգում ստեղծվել էր քլորոպրենային կաուչուկի արտադրության առաջին կոմբինատը, որը գործում է առ այսօր և ունի բավականին մեծ արտադրական հզորություն (տարեկան շուրջ 15 հազար տոննա): Հետագայում մեքենաշինության զարգացման արդյունքում Չինաստանում համեմատաբար աճեց կաուչուկի պահանջարկը: 2000 թ. տվյալների համաձայն՝ այն կազմում էր տարեկան մինչև 70.000 տոննա, այն դեպքում, երբ չինական կաուչուկի արտադրությունը ծածկում էր այդ պահանջարկի ընդամենը 50 տոկոսը, ուստի երկիրը հարկադրված էր ներմուծելու հսկայական քանակությամբ կաուչուկ<sup>11</sup>:

2000 թ. ապրիլին Հայաստան այցելեց Շանսի նահանգի սինթետիկ կաուչուկի արտադրման ընկերության պատվիրակությունը: Այցի նպատակն էր «Նաիրիտ» գիտաարտադրական ՓԲԸ ղեկավարության հետ բանակցություններ վարել համագործակցության հնարավորությունների ուսումնասիրման համար: Բանակցությունների արդյունքում ստորագրվեց արձանագրություն, որի համաձայն՝ կողմերը պետք է համատեղ գործունեություն ծավալեին Հայաստանից կաուչուկի արտահանման, ընկերության առկա կարողությունների վերազինման, համատեղ արտադրության կազմակերպման, ինչպես նաև 2003-ում «Նաիրիտի» տեխնոլոգիաներով հայ-չինական համատեղ նոր ձեռնարկություն ստեղծելու ուղղությամբ: Չինաստանում քլորոպրենային կաուչուկի արտադրության չին-հայկական համատեղ ձեռնարկության ստեղծման գաղափարը հայկական կողմից դրական արձագանք ստացավ:

2001 թ. հոկտեմբերի 12-ին 2003-ի ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի պալատում կայացավ «Նաիրիտ» ձեռնարկության և Շանսի նահանգի սինթետիկ կաուչուկի ձեռնարկության միջև համատեղ ձեռնարկություն ստեղծելու վերաբերյալ պայմանագրի կնքման հանդիսավոր արարողությունը:

«Սինթետիկ կաուչուկի Շանսի Նաիրիտ» հայ-չինական համատեղ ձեռնարկության շինարարությունը սկսվեց 2002 թվականին, և պայմանավորվածության համաձայն գործարանը պետք է գործարկվեր 2008 թ. սկզբին: Ձեռնարկության տարեկան արտադրական հզորությունը կազմելու էր 30 հազար տոննա: Նախնական շրջանում այն գործելու էր հնարավորությունների 75 տոկոսով, այնուհետև պետք է ավելացվեին արտադրության ծավալները: Ձեռնարկության կառուցման համար նախատեսվեց ավելի քան 100 մլն դոլարի ներդրում: Ընկերության ստացած շահույթի 40 տոկոսը պատկանելու էր ՀՀ կառավարությանը, իսկ 60 տոկոսը՝ չին ներդրողներին:

Պետք է նշել, որ վերոհիշյալ գործարքի իրականացումը աննախադեպ հաջողություն էր Հայաստանի համար ոչ միայն շահույթ ապահովելու առումով, այլև հայ գիտական միտքը ճանաչում գտավ մի այնպիսի երկրում, ինչպիսին դիմամիկորեն զարգացող Չինաստանն է՝ իր հսկայական շուկայով: Այս համատեղ ձեռնարկությունը դարձավ հայ և չին ժողովուրդների բարեկամության խորհրդանիշը:

Բացի քիմիական արդյունաբերությունից՝ չինական ընկերությունները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին նաև Հայաստանում մրցույթով հայտա-

<sup>11</sup> Տե՛ս "Голос Армении", 25, 12. 2001:



րարվող օբյեկտների նկատմամբ՝ այն համարելով համագործակցության ամենահուսալի տարբերակը: Այսպես, 2000 թ. դեկտեմբերին չինական տեխնոլոգիաների արտահանման և ներմուծման «CNTIC» ընկերությունը շահեց Զրագրանի ջերմաէլեկտրակայանի 5-րդ էներգաբլոկի պահածոյացման աշխատանքների իրականացման միջազգային մրցույթը: 2002 թ. հունվարին ընկերությունը ժամանակին կարողացավ ավարտել կաթսայական ագրեգատի հավաքակցման, փորձարկման և պահածոյացման աշխատանքները: Տողերիս հեղինակը մասնակցել է աշխատանքների ավարտական փաստաթղթերի ստորագրման պաշտոնական արարողությանը, որի ժամանակ ԶՅ վարչապետ Ա. Մարգարյանը կարևորեց չին մասնագետների և ընկերությունների հետ տնտեսական տարբեր ոլորտներում համագործակցության քաղաքական նշանակությունը Հայաստանի տնտեսության զարգացման գործում:

Հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի համատեղ նիստերը մեծ կարևորություն են տվել երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը: Հայաստանի և Չինաստանի միջև առևտրի ծավալները տարեցտարի սկսեցին աստիճանաբար ավելանալ: Վիճակագրական տվյալների համաձայն՝ ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջև եթե 1997 թ. կազմել է ընդամենը 370.000 ամերիկյան դոլար, ապա 2008 թ. այն հասել է 383.880.000 դոլարի<sup>12</sup>:

2007 թ. ապրիլին Երևանում կայացավ հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի 5-րդ համատեղ նիստը, որին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանեց Չինաստանի առևտրի նախարարության Եվրոպայի վարչության պետ, հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի չինական կողմի համանախագահ Սյու Թունքայի գլխավորած պատվիրակությունը: Նիստի ժամանակ քննարկվեցին երկու երկրների միջև հեռահաղորդակցության, շինարարական տեխնիկայի, գյուղատնտեսության, էլեկտրական և կենցաղային սարքավորումների բնագավառում համագործակցության ընդլայնման հնարավորությունները: Նիստում չինական կողմը նշեց, որ ծրագրում է Հայաստանում ներդրումներ կատարել, որը, ինչ խոսք, շատ կարևոր է Հայաստանի տնտեսության զարգացման համար:

Հայ-չինական հարաբերությունները զարգանում էին նաև գիտության բնագավառում: Հաշվի առնելով Հայաստանի գիտական ներուժի անվիճելի փաստը՝ չինական կողմը շահագրգռված էր համագործակցություն հաստատելու գիտական առանձին ոլորտների շուրջ:

2001 թ. կայացավ հայ-չինական գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի առաջին հիմնադիր նիստը: Հանձնաժողովը կոչված էր հայ-չինական գիտատեխնիկական համագործակցությանը հաղորդելու ինստիտուցիոնալ ձև, որը նախատեսում էր կանոնակարգված ընթացակարգով համատեղ գիտական ծրագրերի և թեմաների իրականացում, որոնք պետք է հաստատվեին հանձնաժողովի հայկական և չինական մասերի համատեղ նիստերի ընթացքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադիր նիստի ընթացքում նմանօրինակ ծրագրեր չէին կարող ներկայացվել, կողմերը պայմանավորվեցին մոտակա երեք ամիսների ընթացքում արդեն իսկ հաստատված ձևերով փոխանակելու համապատասխան փաստաթղթեր՝ կցելով առաջին նիստի արձանագրությունը:

<sup>12</sup> Տվյալները վերցված են ՀՀ-ում ՉԺՀ դեսպանության կից առևտրատնտեսական հարցերով գրասենյակից:

2001 թ. սեպտեմբերին Չինաստանի Սինցզյան-Ույգուրական ինքնավար շրջանի կենտրոն Ուռունչի քաղաքում բացվեց հայ-չինական բիոինժեներիայի հետազոտման և զարգացման կենտրոնը: Կենտրոնի բացումը Հայաստանի արդյունաբերության և առևտրի նախարարության կենսաբանական տեխնոլոգիաների ինստիտուտի և Սինցզյանի գյուղատնտեսական ակադեմիայի միկրոբիոլոգիայի ինստիտուտի միջև մոտ տասը տարի շարունակվող սերտ համագործակցության արդյունք էր:

Հայաստանի և Չինաստանի միջև արդյունավետ համագործակցություն է հաստատվել նաև գյուղատնտեսության բնագավառում, որը հիմնականում ընթացել է գյուղատնտեսական կուլտուրաների փոխանակման, օրինակելի այգիների հիմնման տեսքով: Մասնավորապես, Չինաստանի Շանսի և Խեբեյ նահանգներում հաջողությամբ փորձարկվել են հայկական ծիրանի և խաղողի տեսակները:

1999 թ. պտղաբուծության և խաղողագործության բնագավառում հայ և չին մասնագետների աշխատանքները տվեցին առաջին պտուղները: Հայկական «շալախ» տեսակի ծիրանենին և խաղողը չինական հողում ամուր արմատ են գցել և տվել առաջին բերքը: «Տնկարան» ՊՓԲԸ գործադիր տնօրեն Սեդրակյանի խոսքերով «Չինացիները զարմացած են, հիացած մեր ծիրանի համով, յուրաքանչյուր պտուղ կշռում է 60-80 գրամ: Գրեթե նույն համը, տեսքը, հյութեղությունը, ինչ Հայաստանինն է»<sup>13</sup>:

2000 թ. հունիսի 24-30 Չինաստանի Հեբեյ նահանգի արտասահմանյան մասնագետների հարցերով բյուրոյի հրավերով ՉԺՀ այցելեց ՀՀ գյուղնախարարության պատվիրակությունը, որը եղավ նահանգի գյուղատնտեսական այն շրջաններում, որտեղ նախկինում հայ մասնագետների օժանդակությամբ հիմնադրվել էին հայկական մրգատեսակների այգիներ, և ծանոթացավ դրանց ներկա վիճակին: Կողմերը պայմանավորվեցին շարունակելու համագործակցության նշված ժրագրերը, երկու երկրներում հիմնելու համատեղ վերամշակման գործարաններ:

Նույն թվականի հուլիսին ՀՀ գյուղնախարարության հրավերով Հայաստան այցելած չինական Շանսի նահանգի պատվիրակությունը հայկական կողմի հետ ստորագրեց մտադրությունների մասին արձանագրություն գիտահետազոտական և կրթության բնագավառներում համագործակցության կոնկրետ առաջարկությունների վերաբերյալ:

Չինաստանի կառավարությունը Հայաստանի կառավարությանը մի քանի անգամ անհատույց տրամադրել է մինի տրակտորներ, որոնք բաշխվել են բաց աճուրդով: Երկու երկրների միջև ստորագրվել են համաձայնագրեր գյուղատնտեսության ոլորտում համագործակցության մասին: Մասնագիտական օգնություն ցուցաբերելու նպատակով Հայաստանից Չինաստան են գործուղվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակիցներ, իսկ Հայաստանի գյուղակադեմիայում խաղողագործության և պտղագործության թեմայով վերապատրաստման դասընթացներ են անցկացվել Չինաստանի Հեբեյ նահանգի մասնագետների համար:

Երկու երկրների գյուղնախարարությունները շարունակում են իրենց արդյունավետ համագործակցությունը ստորագրված փաստաթղթերի ու ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, և առկա են բոլոր նախադրյալները էլ ավելի խորացնելու համագործակցությունը ինչպես

<sup>13</sup> «Հայաստանի Հանրապետություն», 25. 10. 2000 թ.:

առևտրատնտեսական, այնպես էլ գյուղատնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառներում:

2008 թ. մարտին Ծաղկաձոր քաղաքում տեղի ունեցավ «Չինաստան-Հայաստան» տնտեսական համագործակցության առաջին նիստը, որի աշխատանքներին մասնակցում էր ՉԺՀ Սինցզյան-Ույգուրական ինքնավար շրջանի պատվիրակությունը: Նույն թվականի սեպտեմբերին Հյուսիսսահական առևտրաներդրումային տոնավաճառին մասնակցելու նպատակով չինական Չանչուն քաղաք այցելեց ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանը, որը հանդիպումներ ունեցավ Չինաստանի վարչապետ Վան Շիշանի, առևտրի փոխնախարար Գաո Խուլչենի և Չանչունի քաղաքապետ Ցույ Ցզենի հետ:

**НУБАР ЧАЛЫМЯН – *Армяно-китайские отношения в 1992–2007 гг.*** –

В статье рассматриваются армяно-китайские политические, торгово-экономические и культурные контакты после установления дипломатических отношений между двумя странами. Освещаются основные внешнеполитические векторы и принципы развития двусторонних отношений, которые отражают совпадение политических интересов РА и КНР, а также их сотрудничество в международных делах. Особое место уделено вопросу межпарламентского сотрудничества наших стран, поскольку взаимопонимание между законодательными органами играет исключительную роль в государственных отношениях. В статье освещаются также год от года углубляющиеся торгово-экономические связи между Арменией и Китаем и взаимоотношения двух стран в сфере культуры, науки и сельского хозяйства.

**NOUBAR CHALEMYAN – *Armenian-Chinese relations between 1992 and 2007.*** – The paper discusses Armenian-Chinese political, trade-economic and cultural relations after the establishment of diplomatic relations between the two countries. The author illustrates the main foreign political policies and the principles of the development of bilateral relations that reflect the accord of political interests of Armenia and China and their international cooperation. The aspect of the interparliamentary cooperation of Armenia and China is also considered. The friendly relations between the legislative bodies of Armenia and China have contributed to the development of state relations.

The article also enlightens those tendencies that foster the trade-economic relations between Armenia and China, as well as considers the relations between the two countries in the fields of culture, science and agriculture.